ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Ընդդեմ Hraparak.am կայքի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի օգնական Մուշեղ Հովսեփյանի դիմումի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի օգնական Մուշեղ Հովսեփյանն՝ ընդդեմ Hraparak.am կայքի՝ 2020թ. մայիսի 20-ին հրապարակված «Նախարար Բաթոյանը ինքնամեկուսացվել է» վերնագրով նյութի (հեղինակ կայքում նշված չէ):

Ըստ բողոքի հեղինակի՝ հրապարակման մեջ տեղ են գտել իր առողջական խնդիրների մասին այնպիսի տեղեկություններ, որոնք չեն կարող համարվել անհրաժեշտ հանրային շահերի պաշտպանության համար: Ըստ բողոքողի, արվել են նաև իր աշխատանքի վերաբերյալ մեկնաբանություններ, որոնք կատարելիս խմբագրությունը չի հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա:

Այսպիսով, դիմումատուն ԴՄ-ից ակնկալում է իրականացնել աշխատակարգով սահմանված գործողություններ:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. Hraparak.am կայքը 2020թ. մայիսի 20-ին հրապարակել է «Նախարար Բաթոյանը ինքնամեկուսացվել է» վերնագրով նյութը, որում խմբագրությունը, առանց հղում կատարելու որևէ աղբյուրի, անդրադարձել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առանցքային դեմքերի՝ կորոնավիրուսով վարակելու դեպքերին: Hraparak.am-ը, ի թիվս այլ

տեղեկությունների, հաղորդել է, որ «կորոնավիրուսով են վարակվել նախարարի օգնականները, մասնավորապես Մուշեղ Հովսեփյանը, որը նախարարի աջ ձեռքն է, թեև նախարարությունում ասում են, որ հակառակը՝ նախարարն է նրա աջ ձեռքը։ 24-ամյա օգնականն է դե ֆակտո կառավարում նախարարությունը, նա է աշխատում նախարարի մալբրի համակարգով, նա է նախարարության աշխատակիցներին հրահանգներ տալիս, նկատողություններ անում»։

2. 2020թ. մայիսի 21-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն ստացել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի օգնական Մուշեղ Հովսեփյանի դիմումը, որում վերջինս գրում է, որ իր «առողջական խնդիրների մասին տեղեկությունները, այդ թվում՝ վարակիչ հիվանդություն ունենալը, չեն կարող համարվել անհրաժեշտ հանրային շահերի պաշտպանության համար», նաև այն պատճառով, որ ինքը չի զբաղեցնում որոշումների կայացում ենթադրող հանրային պաշտոն։

Բացի այդ, Հովսեփյանը գտնում է, որ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ հրապարակելուց առաջ կայքը չի օգտագործել բոլոր հնարավոր միջոցները, այդ թվում՝ իրեն դիմելը՝ «փաստերը ճշտելու, արտահայտվելու հնարավորություն տալու նպատակով»։

3. Մ. Հովսեփյանը պնդում է նաև, որ հրապարակմամբ կասկածի տակ է դրվում իր՝ որպես «հանրային պաշտոն զբաղեցնող անձի բարեվարքությունը՝ բարեկրթությունը և հարգալիրությունը, որոնք ամրագրված սկզբունքներ են «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքով», քանի որ իրեն են վերագրվել գործողություններ, որոնք նախատեսված չեն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրությամբ։ Բողոքողը հայտնում է, որ այդ տեղեկությունը հրապարակելիս լրատվամիջոցը մեկնաբանություն չի խնդրել իրենից։

4. Հրապարակման մեջ նշվում է, որ տեղեկությունը ստուգելու համար իրենք դիմել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մամլո խոսնակին, որը մերժել է տրամադրել նախարարության աշխատակիցների, այդ թվում՝ Մ. Հովսեփյանի վարակված լինելու տեղեկությունը՝ պատճառաբանելով, որ այն բժշկական գաղտնիք է, ինչպես նաև պահանջել է կատարել գրավոր հարցում, ինչը, դատելով հրապարակումից, խմբագրությունը չի արել։

5. 2020թ. հունիսի 18-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը նամակով դիմեց Hraparak.am կայքի գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանին՝ ստանալու վերջինիս մեկնաբանությունները տվյալ բողոքի կապակցությամբ, ինչպես նաև՝ լրացուցիչ

տեղեկություններ, եթե կան այդպիսիք: Գլխավոր խմբագիրը պատասխանեց, որ ԴՄ-ն իրավասություն չունի քննելու օրաթերթի հետ կապված դիմումները և առաջարկեց, որ բողոքողն անձամբ դիմի իրենց՝ խնդրի առնչությամբ սպառիչ պատասխաններ ստանալու:

6. 2020թ. հունիսի 17-22-ը ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն անցկացրեց բողոքի առցանց քննարկումներ:

Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք

Հոդված 8. Հերքման և պատասխանի իրավունքը

1. Անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը:

II. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք

Հոդված 1087.1. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները

9. Եթե վիրավորելիս կամ զրպարտելիս հղում չի կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին), կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ, կամ լրատվական գործունեություն իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի հայտնում հեղինակի անունը, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը, իսկ եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվական գործունեություն իրականացնողը:

III. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր

1.1. մինչև հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել և չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ,

2.1. հնարավորինս նշել տեղեկությունների աղբյուրները,

2.2. հնարավորինս խուսափել տեղեկատվության խորհրդապահական աղբյուրներ օգտագործելուց, լրատվության աղբյուրը գաղտնի պահելու խոստումից առաջ միշտ պարզել շարժառիթները, սակայն եթե տեղեկությունն այնուամենայնիվ տրվում է աղբյուրի գաղտնիության պայմանով, որևէ պարագայում չբացահայտել այն,

4.1. պաշտպանել մարդկանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ներառյալ՝ հարգանքն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի, սեփականության, առողջության և նամակագրության նկատմամբ: Բացառապես հասարակական շահի առկայությամբ կամ պաշտպանության անհրաժեշտությամբ կարող է արդարացվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին վերաբերող տեղեկությունների հրապարակումը,

6.2. պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, և պատասխանի հնարավորություն ընձեռելու բոլոր նրանց, ում հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

քննարկելով

ընդդեմ Hraparak.am կայքի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի օգնական Մուշեղ Հովսեփյանի բողոքը,

ի գիտություն ընդունելով, որ

նախարարի օգնականի կողմից՝ «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքից չբխող և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրությամբ չնախատեսված գործողությունների ենթադրյալ կատարումը կարող էր ունենալ հանրային հետաքրքրություն և ըստ այդմ՝ լինել հրապարակման ենթակա,

ընդունելով հանդերձ, որ

տեղեկությունների աղբյուրը չբացահայտելը «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով լրատվամիջոցների և լրագրողների համար սահմանված իրավունք է,

արձանագրում է.

1. 2020թ. մայիսի 20-ին, «Նախարար Բաթոյանը ինքնամեկուսացվել է» վերնագրով նյութի մեջ Hraparak.am-ը հղում չի կատարել որևէ աղբյուրի, առանց ճշտումների փոխանցել է ասեկոսեները: Հետևաբար, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 9-րդ մասի, պատասխանատվությունը կրում է կայքի խմբագրությունը,

2. կայքի խմբագրությունը, հրապարակելով անձի՝ վարակված լինելու հանգամանքը՝ խախտել է հիվանդի նույնականացման անընդունելի լինելու, անձնական կյանքի գաղտնիության իրավունքը,

3. նախարարի օգնականի՝ կորոնավիրուսով վարակված լինելու մասին հրապարակումը պատրաստելիս կայքի խմբագրությունը տեղեկությունը ստուգելու փորձ կատարել է մամուլի խոսնակից, բայց ոչ՝ անձամբ նախարարի օգնականից՝ խախտելով տեղեկությունները մի քանի աղբյուրից ճշտելու սկզբունքը:

ՔԱՆԻ ՈՐ Hraparak.am-ը ինքնակարգավորման նախաձեռնության անդամ չէ և պարտավոր չէ հրապարակել սույն փորձագիտական կարծիքը, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հորդորում է բողոքի հեղինակին՝ օգտվել «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ պատասխանի հրապարակման իր իրավունքից, ինչպես նաև նկատի ունենալով կայքի խմբագրի վերը նշված առաջարկությունը՝ դիմել խմբագրություն՝ պատասխանի կամ հերքման պահանջով: ԴՄ-ն լրատվամիջոցին կոչ է անում հրապարակել այն՝ նպաստելով պատասխանատու լրագրության սկզբունքների պահպանությանը:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի
2020թ. հունիսի 22-ի նիստում,
ԴՄ հետևյալ կազմով՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Արա ՂԱՋԱՐՅԱՆ, իրավաբան

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 47-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007թ. մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015թ. մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: